ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 3/9.12

2015թ. դեկտեմբերի 17-ի թիվ 3 նիստի

<<ՏԱՎԻՏՅԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՍՈ ՏԱՎԻՏՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 7-րդ ենթակետով, ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով և ԵՊՀ պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգի դրույթներով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Հասարակական բեղուն գործունեության, Հայաստանում կառավարման համակարգի և կրթության ու գիտության զարգացմանն ուղղված մեծ ջանքերի, ԱՄՆ-ի առաջատար համալսարաններում և գիտական կենտրոններում Երևանի պետական համալսարանի երիտասարդ կադրերի մասնագիտական վերապատրաստմանը ցուցաբերած մեծ աջակցության համար <<Տավիտյան>> հիմնադրամի նախագահ Ասո Տավիտյանին շնորհել Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ